1914
Kunstpläne

2004

205
S-23

35 B. 540

88

N 8x.

1914 Ամ. 21 1491-ՀԿ

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑ

205
Ս-23

ԿԱՐԱՌՈՏ

ՔԱՐՈՒՕՂՆԵՐ

Թարգմանութիւն

Նէյերէ պոպէրո-Նէ՝ն։

Ի ՄՈՍԿՈՎ.
Ի Տպագրատան Հէմպարձումի Տէրունական Լաղարէանց։
1840.

205
S-23
241

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

съ тѣмъ, чтобы по напечатаніи, представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Москва, 1840 года, Сентября 29 дня.

Цензоръ В. Флеровъ.

5883
38

ԱՌԱՋԻՆ ՔԱՐՈԶ։

Ինչ օգուտ է մարդոյ՝ որ ամէն աշխարհը ստանայ, և իրան անձին վնաս տայ։ Կամ թէ ինչ գին կըտայ մարդ իրան անձըն փըրկելոյ համար։ (Մ։ պէ։ ԺԶ։ 26։)

Այս շատ երևելի բանս քանի քիչ միտք է առնըվում աշխարհքի մէջ. քանի՞ քիչ են նորանք՝ որ իրանց հոգոյ փրկութիւնըն իբր կեանքի գլխաւոր գործ են համարում։ Դուք որ հիմիկ էս փոքր գրքի խօսքերըն կարդումէք, և կամ լսումէք մի՞թէ մին ժամանակ մտքներդ առնէք էն մեծ գործըն. այ՞ ձեր հոգոյ փրկութիւնըն. և հիմիկ միթէ էնպէս է՞ք վարվում, որ ստանաք և վայելէք նորան։ Այթէ էսպէս անէք, ապա էս խօսքս՝ որ հիմիկ կարդալու է՞ք, յայտնի ցոյց կըտայ ձեզ էն խորհուրդներըն և մտածմունքներըն որ ձեր սրտի մէջ տպաւորված են։ Ինչպէս որ ինձանում մարմին կայ, էնպէս էլ,

հոգի կայ։ Իմ հոգիս կապրի յաւիտեան, կամ ուրախութեան մէջ՝ և կամ ողբմելութեան և խղճութեան մէջ։ Նա կարող է անասելի մեծ ցաւեր քաշել և կամ ուրախութիւններ վայելել. քան թէ իմ մարմինս։

Եթէ յաւիտենական աշխարհքին մանիկ տամ. քիչ բան է, եթէ էստեղ աղքատութեան մէջ ընկած լինիմ, կամ մեծութեան մէջ բարձրացած՝ էս քիչ տարիներիս ժամանակուն որ աշխարհի մէջ ապրում եմ. եթէ իմ մահկանացու ընկերներիցս փառաւորվիմ կամ անարգվիմ. եթէ իմ մարմինս շատ հիւանդ լինի, կամ առողջ, ցաւերով լցված, կամ հանգստութեանով ուրախացած։ Այս ամէնս շատ քիչ բան է։ Ինչու որ մահն հաստատ է և մօտաւոր։ Շուտով իմ մեռած մարմնոյ վերայ կասվի. թէ հոգի թող դէպի հոգ դառնայ, և մոխիրդ դէպի մոխիր։ Ասա թէ որ բոլոր աշխարհքիս էլ էբր յաստուկ ստացված ունենամ լինձ, ինչ օգուտ կըկարենայ բերել լինձ համար իմ մահուան սահմանումն, կամ ինչ մխիթարու-

թիւն կըտայ ինձ։ Բայց ամէնից շատ հար-
կաւոր քննութիւնն՝ որ ես պէտք է անեմ,
ես է՝ որ բոլոր մտքով հարցնեմ. թէ իմ
հոգիս մինչև յաւիտեան ուրախ կըլինի կամ
ողբմելի, հրեշտակներին և կատարելութեան
մէջ հասած սրբերին ընկեր կըլինի Աստուծոյ
աթոռի չորս կողմանքն. և կամ կըգտուա-
պարտվի, որ հոգոյ հանելով և ատամները
կրճտելով և լաց լինելով դևերի հետ և
դատապարտված հոգիների հետ, տանջվի
դժոխքումն. որտեղ որ որդն իսկի չի մեռնիլ
և կրակն իսկի չի ջնջվիլ։

Այս սրա համար իմ գլխաւոր գործս, և
ցանկութիւնս և ջանքս միշտ հենց մէնակ էս
պէտք է լինի, որ փախչիմ էն բարկութենից,
որ գալու է, և մին հաստատ ժառանգութի
գտնեմ սրբերին հետ, որ լուսոյ միջումն են
բնակվում։ Այս իրաւի էսպէս է։ Ո՞ր աշ-
խարհք շատ աւելի է իմ մտքումն, էս հի-
միկվանս, թէ նոր եկողն. որին համար եմ
շատ աւելի հոգս անում. Զի՞ որ շատ անգամ
պատմանքի մէջ եմ լինում, և հոգս անում,
թէ ինչ պիտի ուտեմ, կամ ինչ պիտի

մեմ, կամ թէ ինչ պիտի հաղնեմ։ Բայց ԵՐԲ Ճշմարտութենով քննեցի. թէ ինչ պէտք է անել ինձ որ ապրիմ։ Թէ որ իմ հոգոյ փրկութեան համար ջերմեռանդ փա-փակ ջանենամ, և Ճշմարտութենով հոգս չանեմ՝ ապա անսխալ կարող եմ գիտենալ՝ թէ իմ վիճակս չար է, և իմ հոգիս կո-մուստի մօտն է։

ԵՐԿՐՈՐԴ ՔԱՐՈ՗Զ։

Ամէն ում որ մեղք է գործում, նա անօ-րէնութիւն էլ է անում. և հենց ինքն մեղքն անօրէնութիւն է։ (ա. Յ՝ հ. գ. 4։)

Ով մեղաւոր մարդ՝ միթէ մին ժամանակ քննեցիր, թէ մեղքն ինչ է։ Մի թէ մին ժամանակ պարապվեցար աստուծոյ խօսքն քննելոյ, որ կարենաս անսխալ իմանալ էս չար բանս որ ամէն չար բանների գլխաւորն է։ Նիթէ էն խսկի մին ժամանակ չըքննեցիր,

ապա քո վիճակդ չար է, և անասելի չար։ Դեռ շատ պէտք է վախենաս քո փրկութեան համար որ իսպառ չկորչիս նորան։

Ապա սրտի մտօք մտիկ արա՛ էս ասված խօսքերիս. և քո սիրտըդ բարձրացրու դէպի աստուած և ասա՝. Տէր շնորհի՛ր ինձ, որ քո ճշմարիտ լուսովդ հաստատ ճանաչեմ՝ թէ ի՞նչ է մեղքն և թէ ի՞նչ է նորա չարութիւնն։ Այ հիմիկ հենց մեղքն ինքն անօրէնութիւն է, և անօրէնութիւնն օրէնք քանդելն է։ Ապա ո՞ր օրէնքի. ամենասուրբ աստուծոյ օրէնքին։ Այ ո՞ր տեղ կարելի է էս օրէնքըս գտնել։ Ահա՛ սա էն տասն պատուիրանքներումն է գրված՝ որ աստուած Մօսէսի ձեռովն տուաւ մեզ։ Ապա քննի՛ր քո անձըդ. միթէ ես մին ժամանակ կարդացի նորանց ահով լցված սրտով և սարսափելի ձայնով, որ հարցնեմ իմ անձըս՝ թէ լինի որ ես էլ աստուծոյ սուրբ օրէնքի էս կամ էն պատուիրանքըն քանդեցի։ Մի թէ մին ժամանակ մտածո՞ւցի՝ թէ կարելի՞ է խորհըրդով էլ քանդել օրէնքըն ինչպէս որ խօսքով կամ գործքով։ Մի թէ մին ժամա-

նակ միտք արի, թէ օրէնքն հոգևոր է, և ներս է մտնում մինչև խորհուրդների մէջ, կամքի մէջ և սրտի թագուն վախակների մէջ. և թէ ամէն ծուռ խորհուրդ օրէնքըն քանդում է. և թէ ամէն դարշելի վախակ մեղք է. և թէ ամէն դատարկ բանի համար՝ որ մարդիք կըխօսեն, պատասխան պիտի տան դատաստանի օրուցն, (Մատթ. ԺԲ. 36,) էն սարսափելի օրուցն, երբ որ սրտերի քննօրն ստուգած մեր սրտի ծածուկ խորհուրդներըն կըդատէ: Վա՜յ ինձ. քանի դատարկ մտածմունքներ անցկացան իմ մտքումս և ես նորանցից ամէն մէկին համար իսկի ՀՇմարտապէս միտք չարի, թէ էս մեղք է: (Ծննդ. Ը. 5:) Քանի շատ դատարկ բաներ խօսեցի ես ամէն օր առանց հոգս անելոյ, թէ նորանց ամէն մէկին համար պիտի պատասխան տամ: (Մատթ. ԺԲ. 36:) Երբ բռնադատեցին ինձ էն չար մտածմունքներն, խօսքերն և գործքերն՝ որ սրտի խորութենէն ցաւալի ձայնով աղաղակեմ. ով աստուած ողորմիր ինձ մեղաւորիս: Եթէ օրէնք քանդելն մեղք լինի, այսինքն՝ եթէ ամէն պակասութիւն որ

էն օրէնքովն խնդրված կատարելութենիցն խորհրդով, խօսքով և գործքով պակասված գտնըվիմ. ասումեմ, եթէ էն ամէն պակասութիւնն մեղք լինի, ինչպէս որ էն բան անելն, որ օրէնքն արգելումէ. ապա քանի՞ քանի՞ համար պիտի պատասխան տամ ես, որ լինի թէ նորանց համար իսկի մին ժամանակ միտք չարի: Այ էս ամէնիս վերայ շատ անգամ խոստովան էլայ, թէ մենք արինք էն՝ որ արժանի չէր մեզ անել, և թողինք էն՝ որ պէտք էր մեզ անել: Այ իսկի առողջութիւն չըկայ մեզանում: Վայ ինձ, ինչու որ աստուծոյն անարգեցի, մէնակ պռօշներով խոստովան լինելով էն՝ որ իսկի չըհաւատայի և չիմացայ իմ սրտումն: Սրա համար ո՞վ Տէր հիմիկ զարթնացրու իմ խղճմտանքըս որ ճանաչեմ, և միտքս առնեմ, թէ մեղքն ինչ է:

ԵՐՐՈՐԴ ՔԱՐՈԶ։

Ամենքն մեղանչեցին և աստուծոյ փառքին պակասեցան։ (Հռովմ. գ. 23։)

Ամենքն մեղանչեցին. ուրեմն դու էլ՝ իմ սիրելի կարդացող, և ես ինքըս էլ։ Մեղանչեցինք, էն է՝ աստուծոյ օրէնքին դուրս եկինք, և նորան քանդեցինք. ինչու որ ոչ ով չըկայ արդար իսկի մինն էլ չէ։ (Հռովմ. գ. 10։) Ոչ ով չըկայ որ աստուծոյ օրէնքըն պահած լինի։

Մենք նորա բարոյական օրէնքի ամէն պատուիրանքներին դուրս եկինք և նորանց քանդեցինք, թէ գործքով, թէ խօսքով, կամ թէ չար ցանկութենով։ Էս յանդիմանութիւնս շատ ծանր է, բայց էս սաստիկ վնասն ամէն կողմանէ ճշմարիտ է։ Թող սրտի մտօք քննենք էս բանըս, աստուծոյն աղաչելով, որ մեր միտքըս լուսաւորէ։

Ակէք էն տասն պատուիրանքներըն ձեր ձեռներդ առէք, և կարդացէք։ Մենք առաջին պատուիրանքըն քանդեցինք՝ ուրիշ բաներին աւելի յուսալով՝ և ուրիշ բաներըն

աբելն սիրելով քան թէ աստուծոյն։ Ինչու որ՝ գրված է. թէ սիրէր քո Տէր աստուծոյն քո բոլոր սրտով. (Մաթ. ԻԲ. 37։) Բայց մենք սորանում պակասված ենք գտնըվում։ Երկրորդ պատուիրանքն էն ձևին է մոտիկ տալիս՝ որ նորանով պէտք է աստուծոյն պաշտել. չէ թէ մէնակ դրսի կերպարանքով և արարողութիւններով, բայց մանաւանդ հոգով և ճշմարտութենով։ Այս վայ մեզ. քանի պակասաւոր ենք եղել էն հարկաւոր մտադրութենիցն, էն ներսի խոնարհութենիցն, և հոգոյ էն ջերմեռանդութենիցն, որ նորա պաշտօնն է խնդրում մեզանից։ Աստուած նախանձոտ աստուած է։ Դուք ասում եք, թէ իսկի մին ժամանակ անիրաւի պէս անիծելով և սուտ երդում ուտելով չըմեղանչեցինք, և սորանով կարծում եք թէ երրորդ պատուիրանքըն պահած լինինք։ Բայց ասացէք ինձ՝ մի թէ ձեր աղօթք անելոյ, կամ՝ սուրբ գրքերըն կարդալոյ ժամանակումն իսկի չըլթողնք աստուծոյ սուրբ անունըն ձեր պուշներոնն անց կենալ առանց ահով խմանալոյ և միտք անելոյ՝ թէ ինչ է էն որ անում եք.

կամ հենց էլ առանց միտք առնելոյ էն ա-
նունը, որ պռոշներով յիշումէիք։ Բայց
Տէրն սուրբ և անմեղ չի հանդուրժիլ էն՝ որ
նորա անունը ոչինչ բաների վերայ է դնում։
(Եղ. ի. 7։) Մի թէ բոլոր շաբաթը
միշտ գործ ածեցի՞ք հենց էնպէսի բարեպաշտ
վարժուլթիւններով և գործքերով, որ ջոր-
-ղորդ պատուիրանքն հրամայումէ. և աստ-
ուածպաշտուլթեան վարժուլթիւններին և գործ-
քերին էլ էնպիսի ջերմեռանդուլթեան կա-
տարեցի՞ք, որ օրէնքն իսկի մին բան չունե-
նայ ձեզ մեղադրելոյ խորհրդով, կամ խօս-
քով, կամ թէ գործքով էլ։

Ո՛վ մեղաւոր մարդ՝ քո ձեռքդ դի՛ր քո
բերանիդ վերայ և խոստովանվի՛ր քո անձիդ
համար, որ մեղաւոր է։ Ապա մի թէ պէ՞տք
է ինձ որ երկրորդ տախտակի պատուիրանք-
ներին էլ մին մին քննեմ և ձեր առաջիդ
դնեմ։ Մի թէ դու ընկերիդ քո անձիդ պէս
սիրումես. մի թէ ամէն մարդկանց էնպէս
արի՞ր, ինչպէս որ դու կամենումէիր որ նո-
րանք անեն քեզ։ Մի թէ իսկի մին ժամա-
նակ չը մեղանչեցիր քո ծնողիդ անհնազանդ

լինելով։ Զ՞ոս գիտում որ ամէն զուր բարկութիւնն մարդասպանութիւն է. (Ա՝ Յովհ. Ե. 22։) և թէ ամէն պիղծ և գարշելի ցանկութիւնն շնութիւն է. (Ա՝ Յովհ. Ե. 28։) և թէ ծածուկ նենգութիւնն և խաբէութիւնն, և քո կարողութեան պէս աղքատներին օգնութիւն տալոյ անհոգութիւնն, գողութիւն են. և թէ ամէն մտածմունք, որ սիրոյ հակառակ է՝ լիներորդ պատուիրանքին քանդումէ. և թէ ագահութեան ամէն փափակն և ցանկութիւնն տասներորդ պատուիրանքին դէմ մեղք է։ Իրաւի մենք ամէնքս մեղանչեցինք անելով էն՝ որ օրէնքն արգելումէ, և չանելով էն՝ որ օրէնքն հրամայումէ։ Ուրեմն ես ի՞նչ արի, և ի՞նչ չարի։ Ամէնքն մեղանչեցին։ Ուրեմն իմ վիճակս ի՞նչ է. մեղանչականութեան և ողորմելութեան վիճակ է։ Այս ինչու համար չիմացայ էն մինչև հիմիկ։ Նրա համար որ՝ մեղքն իմ աչքերուս կուրացրուց, որ ճշմարտութեան լոյսին չը տեսնեմ։



ՉՈՐՐՈՐԴ ՔԱՐՈԶ։

Անիծեալ լինի ամէն մարդ՝ որ օրէնքի գրքի միջի ամէն գրվածներումն չը կենայ՝ որ ամէնը անէ։ (Գ։Պ։Ա։ գ։ 10)։

Ինչ է նշանակում էս ահաւոր բառս՝ անիծեալ։ Աստուծոյ անէծքն նորա արդար բարկութեան և սրբութեան յայտնութիւնն է՝ մեղքերի և մեղաւորների դէմ։ Ով է կարող նորա առաջին ճնալ, թէ որ նա բարկանայ։ (Ա։Պ։ Հե։ 8։) Բայց ով է անիծված։ ամէն մարդ՝ թէ տղայ թէ ծեր, թէ մեծատուն թէ աղքատ, թէ գիտուն թէ ապէտ, որ իրան կեանքի բոլոր ճանապարհներումն և ամէն բանի մէջ չը պարապվի որ առանց դադարելոյ, սխալմունքի կամ պակասութեան, ամէն բաներով, թէ խորհրդով, թէ խօսքով, և թէ գործքով, կատարելապէս էն անէ, որ օրէնքն խնդրումէ։ և էլ իրան անձն իսպառ աղատ պահէ էն բաներից՝ որ օրէնքն դատապարտումէ։ ուրեմն որ կարճ ասեմ՝ էն ամէն մէկն է անիծված, որ չը կենայ օրէնքի գրքի միջի ամէն գրվածնե-

ըու�մն որ ամէնքն անէ։ Այս օրէնքքն չէ՞ թէ դրսի արարողութեան պէս, բայց իրան հոգևոր և շատ գերազանց նշանակութեան և մեկնութեան պէս խմանալ պէտք է։ Այս էլ միտքդ բեր՝ թէ մին էլ ասվումէ. (Յ.ա.ի. ԺԵ. 10։) թէ ով որ ամէն օրէնքքն պահէ, և մին բանում մեղանչէ ամէն օրէնքին էլաւ պարտական։

Ապա հիմիկ լաւ քննիր՝ թէ էլաւ մին օր, կամ մին ժամ (...հ...ի,) կամ թէ սահմանի մին րոպէ՝ որ նորանում քո միտքդ սիրտդ խօսքդ և գործդ էնպէս գտվաւ, ինչպէս որ օրէնքն խնդրումէ։ Բայց անէծքն էն օրէնքումն հատատվաց է ամէն մարդոյ վերայ որ ամէն օրէնքքն չը պահէ, ամէն մարդոյ համար, որ լինի, չէ թէ մէնակ ամբարշտութեան, մարդասպանութեան, շնութեան, և ուրիշ էսպէսի խիստ ծանր մեղքերի համար, բայց էլ ամէն մեղաւոր մտածմունքի համար, և ամէն սահմանի և րոպէի համար, որ նորանում պակասվաց գտվար քո Տէր ատուծոյն քո բոլոր սրտով, և քո բոլոր անձնով սիրելուն։ Ուրեմն օրէնքն քանի՞ շատ

անէծք է հաստատել քեզ և ինձ հակառակ։ Նա տարուց տարի աստուծոյ բարկութիւնը մեզ դէմ յայտնումէ. որովհետև մենք տարուց տարի աստուծոյ դէմ մեղանչումենք։ Ասա՛. չէ՞ որ էսպէս է։ ԿաՀրոզ ես սուրբ գրքերիցն մին վկայութիւն բերել և հաստատել, թէ սուտ լինի։

Ապա ինչ։ Արիթէ ամէն մէկ մեղաւոր անիծուած է ամէն մէկ մեղքի համար. և ես էլ մի թէ իմ ամէն կեանքումն անպակաս մեղք արի՞։ Շնարիտ է, որ իսկի աստուծոյն անկեղծ սիրով չեմ սիրել, և թէ իսկի նորա սիրոցն խղճմտանք չեմ արել հենց մին խորհրդոյ, խօսքի, կամ գործոյ համար, և թէ իսկի մին պարտաւորութիւն չեմ կատարել, կամ մին մեղքից հրաժարվել էն միայն շնտակ պատճառի համար՝ որ է աստուծոյ սէրն։

Արիթէ իմ կեանքս մէնակ չարութեան անդադար ճանապարհ էլաւ։ Ապա ուրեմն իմ վիճակս կորուստի և դատապարտութեան վիճակ է։ Ո՛վ քանի՞ ահաւոր է էս խօսքս։ Ըլլա՞ն յայտնի վկայումէ էս ամէնս՝ որ իմ

միոջս խաչարկած է և իմ սիրոս սնտա-
ցած։ Ուրբաթն մեծ է իմ կուրությունս և
խստությունս՝ որ կարող եմ հենց մին սա-
հաթ էլ աստուծոյ անէծքի տակն ճնալ և
անհոգություն հանկիստ լինել. որ էլ կա-
ղող եմ առանց դողալոյ և վախենալոյ քուն
մտնել և վեր կենալ. որովհետև աստուծոյ
անէծքն մեղաւորին դժոխքի մեջ պիտի քցէ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՔԱՐՈՉ։

Մեղքի պաշարն մահ է։ (Հռովմ. գ. 23։)

Մեղքն անօրէնութիւն է. և անօրէնու-
թիւնն օրէնք քանդելն է. ինչու որ քան-
դումն հենց էն օրէնքին, որ աստուած մարդկանց
համար իբր ամէն իրաւունքի յաւիտենական
կանոն հաստատեց. էս է աստուծոյ բարոյական
օրէնքին։ Մեղքն է՝ ամէն մեղքն և ամէն
մէկ մեղքն, որ նորանոյ հանար աստուծոյ բանն
էստեղ խօսումէ։ Մահն, ինչ որ էդ բառդ

ՀՍՍՀ-ССРА

եւ նշանակէ, արդար եւ հաստատ հատուցումն է ամէն մէկ մեղքի համար, որ խորհրդով, խօսքով եւ կամ գործքով կատարուեցաւ։ Բայց մահն ինչ է։ Մարմնոյ մահն էն է՝ որ մարմինն հոգուցն բաժանուումէ։ Դու մեղաւոր ես, եւ հենց հիմիկ մեղքի էս պտուղներըն տեսնումես էն ամէն ցաւերովն, տանջանքներովն եւ հիւանդութիւններովն, որ քո մարմնըդ տկարացնումեն եւ դէպի գերեզմանն են քաշում։ Իրաւի որ հենց հիմիկ ամէն օր մեռնումես դու։

Մարմնոյ մահն, կամ նորա հոգուց բաժանուելն՝ յետ կըդարձնէ նորան դէպի հողն որ տեղից որ առած է։ Բայց մահն էստեղ մեր բնաբանի մէջն մին շատ աւելի սաստիկ բան է նշանակում, այսինքն հոգոյ մահըն։ Ա՛ն ինչ է։ Դա էնքան աւելի ահաւոր է քան թէ մարմնոյ մահն, որքան որ հոգին շատ աւելի պատուական է քան թէ մարմինն։ Պատճառն որ՝ հոգոյ մահն էնէ, որ հոգին աստուածանից, ինչպէս իրան կենդանի եւ երանութեան աղբիւրից բաժանումէ։ Ա՛ն սրանից անդադար մեղք են դուրս գալիս,

ոլովհետև աստուծոյ շնորհքն հեռացաւ. և ապա առաջ կամ հետոյ էնպէսի նեղութիւն է ծագում հոգոյ մէջն որ ինքըն-իրան չարչարէ. ինչու որ՝ աստուծոյ լոյսն և սէրն և բարեկամութիւնն, և նորանից կախված ամէն շնորհքներն կորան նորա սրտումն: Ապա առանց աստուծոյ հոգին մեռած է. այսինքն խաւարն և մեղքն անդադար տանջումեն նորան. պատճառն որ՝ աստուած հոգոյ համար կեանքի յատուկ աղբիւրն է, ինչպէս որ հոգին մարմնոյ կեանքին պատճառ է: Ուրեմն հոգևոր մահը, կամ հոգոյ մահը էնպէս իմանաս՝ որ ոչ թէ խղճմտանքի կամ ներսի ըզգայութեան կորուստ է, բայց աստուծոյ պատկերի և սիրոյ կորուստ է: Պատճառն որ՝ նորա սէրն կեանք է, և նորա բարկութիւնն մահ: (Պողմ. իթ. 6:) Ապա իմ սիրելի մեղաւոր ընկեր՝ եթէ դու աստուծոյ էն շնորհքովն որ մեղաւորն նորա մօտ է դարձնում, դու կենդանացած չես, ապա էս է քո վիճակդ: Դու մեռած ես յանցանքներով և մեղքերով. և եթէ աստուծոյ հոգոյ ձեռովն որ պիտի տրվվի քեզ, չըկենդանանաս՝

քո էս կեանքս էլ փոխվելուն առաջ. ապա պէտք է որ յաւիտեան մնաս էս ողորմելի վիճակիս մէջն:

Ինչու որ՝ մահն որ նորա համար էս տեղ մեր բնաբանն խօսումէ, էն յաւիտենական կեանքին դէմ դրած է, որ նորան Պօղոսն հետևեալ խօսքի մէջն յիշումէ: Այ մեղ. ինչու որ՝ էս հոգևոր մահս անասելի խեղճութիւն է բերում մեզ վերայ հենց հիմիկ էս կեանքումն, ինչպէս որ ամէն մարդոյ փորձառնելն վկայումէ եթէ ճշմարիտըն խոստովանի: Ապա ինչ պիտի լինի նոր գալու աշխարհքումն, որ յաւիտենական է: Այ. ում է կարող էն յայտնել: Մենք կարդումենք, թէ Քրիստոսն խօսումէ որդնի համար՝ որ իսկի մին ժամանակ չի մեռնիլ և իսկի չի դադարիլ խղճմտանքըն կծելուց և տանջելուց. և կրակի համար՝ որ իսկի մին ժամանակ չի ջնջվիլ և դադարիլ մարմնոյն հոգոյն հետ դժոխքումն ապրեցանելուց. և էլ լոյց լինելոյց և սուգ անելոյց, և ատամներըն կրճտացնելոյց համար. և էս ամէնս յաւիտեան մնալու է:

Այս թէ որ էնպէս լինի՝ մի թէ պա-տիժն անհաւասար չէ՞ յանցանքին։ Թո՛ղ Աստուած արդար լինի, և ամէն մարդ սուտ։ Նա ասում՝ թէ պաշարն, այսինքն մեղքերի արդար հատուցումն՝ մահ է։ Աստուծոյ արդարութիւնն ստիպում է իրան, որ իրան սպառնալիքն և վախ տալն հենց էնպէս էլ կատարէ, ինչպէս որ իրան խոստմունքն։ Ո՛վ վախէք էն բարկութենից որ գալու է։ Պատճառն որ՝ մեզանից ո՞վ է որ կարենայ մաշցնող կրակի մէջ բնակվել. կամ թէ մեզանից ո՞վ է որ կարենայ յաւիտենական բոցի միջումն բնակվել։

ՎԵՑԵՐՈՐԴ ՔԱՐՈԶ։

Այս ինչ պէտք է անեմ որ ապրիմ։ (Գործք. ԺԶ. 30։)

Այս է զարթնացած մեղաւոր մարդոյ ցաւալի հարցմունքն և քննութիւնն։ Զարթ-

նացած մեղաւոր ասելով՝ ես էն մարդը եմ իմանում, որ գիտենայ՝ թէ մեղքն ինչ է. որ էլ ցաւալի սրտով իմանայ՝ թէ ինքն մեղաւոր է. և թէ նրա համար աստուծոյ անէծքի տակն է, և դժոխքի կրակին մէջ քցվելոյ արժան է: Այսպա հիմիկ հարցնում եմ՝ մի թէ դու զաբթնացած մեղաւոր ես: Այ՛ոյ որ՝ ամէն մարդիք առ հասարակ միշտ քնով վեր ընկած են. և ոչ ով չըկայ որ իրան մնտաւոր կորուստըն իմանայ. և էնպէս կենումեն ճնումեն մինչև որ աստուծոյ խօսքին և սուրբ հոգոյ ձեռնին վեր շարժվին իրանց մարմնական թմբրութենից: Նորանք իրանց անձնելին համար միշտ աղաղակումեն՝ խաղաղութիւն խաղաղութիւն, երբ որ էնտեղ խաղաղութիւն չըկայ. պատճառն որ՝ աստուած հաստատ է ասել. (Եսայ. խը. 21:) թէ ամբարիշտներին խաղաղութիւն չըկայ: Նորանք իրանց օրերըն անց են կացնում. օրէցօր մահըն, դատաստանըն և յաւիտենական աշխարհքըն հեռու քցելով իրանց մտքիցն, որ իսկի չըյիշեն նորանց. և իսկի մին ժամանակ էլ աստուածաչունչ գիրքերըն

չեն կարդում ջերմեռանդ ցանկութենով, որ իմանան, թէ իրանց վիճակն ինչ է. և իսկի մին ժամանակ իրանց սրտի խորութենիցն էլ չեն աղաղակում. թէ աստուած ողորմիր ինձ մեղաւորիս: Այլ թէ և լինի, որ էս խօսքը ասեն՝ մէնակ պռօշներով են ասում և ոչ թէ մըտքով և սրտով: Այսպա եթէ դու քո կեանքըդ դեռ էնպէս վարես՝ որ իսկի ջերմեռանդ աղօթք չանես դէպի աստուած, ողորմութիւն գտնելոյ համար. եթէ դեռ օրէցօր անհոգ ես աղօթք անելոյ համար. ապա կատարելապէս ցոյց ես տալիս, թէ աստուծոյ կեանքիցն օտարացած ես՝ էն տգիտութենովն որ քեզանում է, ինչպէս նա որ իրան օրէրըն մեծ անառակութեան մէջ է անց կացնում: Բայց երբ որ աստուած կամենայ մարդոյ սրտի մէջ ճշմարտութեան լոյսըն հաստատել, և նորա խղճմտանքըն զարթնացնել, էն ժամանակն վերը է կենում իրը քնի թմրութենիցն: Այսպա նա տեսնում է էն, որ առաջուց չիմացաւ. այսինքն թէ՝ քանի չար և դառն է աստուծոյ դէմ մեղանչելն: Նա ճշմարտութեան խօսքի մէջն կարդում՝ թէ

աւ՛բարիշան պիտի դառնայ դժոխքն և էն ամէն հելիանոսներն որ աստուծոյն մոռանումեն. (Ա. Պս. Թ. 18։) և էն կարդալովն սկսումէ դողալ։ Այն ժամանակումն խոստովանվումէ, թէ լրաւի որ ես աստուծոյն մոռացել եմ, և նորա դէմ մեղանչել եմ. և հաստատ իմանալով՝ թէ մեղքի պաշարն մահ է, յաւալի սրտով հարցնումէ՝ թէ ինչպէս պիտի պրծնեմ ես դժոխքի դատապարտութենէն։

Այնպէսի մարդն բոլոր սրտի յանկութենով հարցնումէ և քննումէ՝ թէ ես ի՞նչ պէտք է անեմ որ ապրիմ։ Պատճառն որ՝ նա իմանումէ թէ շատ վախ կայ, որ լինի թէ իրան համար խսլաւ փրկութիւն չը գտնէ մինչև յաւիտեան։ Աշխարհքն իրան ամէն բարիքներովն, շահերովն և վաճառքովն անհամ և անախորժ է դառնում նորան. ինչու որ՝ չի կարող նորա յաւալ լցված սրտին հանգիստ տալ, և ո՛չ նորա խոյտոված խղճմտանքն ըժշկել. Այս սկսումէ աղօթք անել. և նորա աղօթքն հիմիկ նորա սրտի յատուկ խօսքն է. և չէ թէ էնպէսի դրսի

արարողութիւն և ծառայութիւն, ինչպէս որ առաջուց էր։ Իրան կորուստը իմանալով նա վրաղ է անում, որ շնորհաց աթոռին մօտ գայ. և աստուծոյ խօսքը կարդում ինչպէս յաւիտենական ճշմարտութեան վճիռը. և էլ էնպէս կարդում՝ ինչպէս թէ գրված.քի ամէն մէկ խօսքերն իրան անձին համար լինին գրված։

Ո՛վ մեղաւոր մարդ, միթէ դու մին ժամանակ էս հարցաքննութիւնները ճրիր. թէ ես ինչ պէտք է անեմ՝ որ ապրիմ։

ԼՕԹՆԵՐՈՐԴ ՔԱՐՈԶ։

Ապաշխարեցէք՝ և աւետարանին հաւատացէք։ (Մարկ. ա. 15։)

Սորանք են մեր օրհնված փրկչի ճշմարիտ խօսքերն, որ նա ողորմելի և պատժապարտ մեղաւորներին համար ասել է՝ ինչպէս որ ես և դու ենք։ Ապաշխարութիւնն ինչ է։ Քրիստոսի հոգոյ ներշնչութիւնն է մարդոյ սրտի մէջն որ նորանով մեղքերի չա

բութիւնը և պատժապարտութիւնը էնպէսի
ներսի լուսով է ցոյց տալիս՝ մինչև որ մար-
դը զարմանայ՝ թէ ինչը ինչպէս դեռ դժոխ-
քի ներքևն չէ ընկել. և մեղքերի դէմ
էնպէսի թշնամութիւն է շինում, որ մար-
դը շարժայնումն էն խսպառ թողելոյ. և
մեղայ պատիժների համար էնպէսի վախ՝ որ
մարդը յոժար է անում, որ բոլոր սրտով
կամենայ և ցանկանայ փրկվել և էն էլ
միայն և խսպառ էն գործքերի և չարչարանք-
ների ձեռովն՝ որ Յիսուս Քրիստոս կրած
հոգիներին համար արել է և քաշել: Աստուա-
խարող մեղաւորն հաստատ ճանաչումն և խմա-
նում. թէ մեղքն պէտք է պատժվի, և թէ
նա ինքն էնպէսի մեղաւոր լինելով՝ ատոռու-
ծոյ բարկութեան տակն է. թէ մեղքն պէտք
է կամ պատժվի և կամ թողվի. և թէ
ինքն կարող չէ իրան շատ փոքր յանցանքի և
մեղքի փոխն էլ վճարել. և ապա թէ սրա
համար իրան ամբողջ փրկութիւնն խսպառ
պէտք է շնորհաց ձեռովն լինել: Այսպէս խո-
նարհված մարդն պատրաստված է, որ ուրա-
խութենով ընդունի էն փրկչի համար էլած

աւետիքներըն որ եկաւ կորած մեղաւորներըն խնդրելոյ և ապրեցնելոյ համար (Ա՚՚Ա. ԺԸ. 11) ինչպէս որ Քրիստոսի աւետարանն է: Նա է ուրախայնող աւետիքն կորած և պատ-ժապարտ աշխարհքի համար: Նորա գլխաւոր վարդապետութիւնն և քարոզութիւնն էս է՝ թէ Յիսուս Քրիստոս աշխարհք եկաւ որ մեղաւորներըն ապրեցնէ. (ա. Տ՚Ի. ա. 15:) Նա մեռաւ որ նորանց մեղքերի համար վճա-րէ, և որովհետև էն մին Քրիստոսն՝ աստուա-ծ և մարդ է բոլորովին, կարող է կենդանի անել նորանց որ նորանով մօտենումեն աս-տուծոյ մօտ: (Ա՚՚ր. Է. 25:) Պատճառն որ նորա արիւնն անչափ պատուական էր. ինչու որ՝ մարդ էլած աստուծոյ արիւնըն էր. (Գ՚՚ԺԸ. Ի. 28:) և հենց նրա համար թափվեցաւ, որ մեղքերըն վէր առնէ: Նրա համար ճիվ ողոր-մելի մեղաւոր մարդ որ ինքդ քո անձըն ես դատապարտում, թէ և քո մեղքերդ թուով աւելի լինին քան թէ քո գլխի մազն, կամ քան թէ ծովու եղերի (ղ՚՚ղ՚) աւազն, և թէ և մեծ և ծանրացած լինին. և ինչպէս կար-ծիր որդան (ղ՚Ող՚) բայց էնպէս էլ յոյս կայ.

ինչու որ Յիսուսի Քրիստոսի արիւնն սրբու-
մէ ամէն մեղքերից, այսինքն՝ էնքան զօրու-
թիւն ունի որ ամէն մեղքից կարենայ սրբել.
(ա. Յոհ. ա. 7։) Բայց էս փրկութեանս ես
ինչպէս պիտի մասնակից լինիմ, կամ էն
միութարութիւնը որ սորանում է ինչպէս
պիտի ստանամ։ Հաւատա աւետարանին և
յոյսդ դիր էն խօսքերի վերայ, որ աստու-
ծոյ բանն, Յիսուսի Քրիստոսի համար, նորա
յաժարութեան և զօրութեան համար ասու-
մէ. որ կամենում՝ և հենց էլ կարող է մե-
ղաւորները փրկել։ Բայց կարելի՞ է որ հենց
ես էլ համարձակ հաւատամ թէ Յիսուս
Քրիստոս աշխարհք եկաւ որ էնպէսի անպի-
տան և ողորմելի մարդ ապրեցնէ՝ ինչպէս որ
ես եմ։ Հա կարելի է՝ ինչու որ՝ էս է աս-
տուծոյ պատուիրանքն, որ դուք հաւատաք
նորա որդոյ Յիսուսի Քրիստոսի անունին. (ա.
Յոհ. գ. 23։) Ապա ուրեմն կարելի չէ որ
համարձակութիւն կամ լրբութիւն համար-
վի էն բան անելն՝ որ աստուած հրամայել
է. և աստուածանից էն խնդրել, որ ինչն
իրան խօսքովն խոստացել է տալ մեզ։

ՈՒԹԵՐՈՐԴ ՔԱՐՈԶ։

Ճշմարիտ է էս խօսքս՝ և ամէն կողմանէ արժանի ընդունելոյ՝ որ Յիսուս Քրիստոս աշխարհք եկաւ մեղաւորներըն փրկելոյ, որ նորանց գլխաւորն ես եմ։ (ա. Տիմ. ա. 15։)

Ահա՛ էս է բոլոր աւետարանի գլխաւոր խօսքն և վարդապետութիւնն։ Յիսուս Քրիստոս աստուած է. նա ստեղծեց աշխարհքըն և էն ամէնըն որ նորանում է. ինչու որ ամէն բան նորանով և նորա համար հաստատվեցաւ. (Տե՛ս. յոհ. ա. 3։ Կ՚ղ՚ս. ա. 11։) Բայց մենք նորա ստեղծվածներս նորա օրէնքըն քանդեցինք, և նորանից ապստամբվեցանք։ Նրա համար արդարութեան օրէնքին պէս նա կարող էր մեզ դժոխքի մէջ քցել էն լճի (գէհենի) մէջ որ կրակով և ծծմբով (գեհենն) այրվում է։ Բայց՝ ողբան զարմանալի է նորա սէրն։ Աստուած մարմնոյ մէջն երևեցաւ, և աշխարհքի մէջ ծնվաւ։ Ինչու համար. մեղաւորներըն ապրեցնելոյ համար։ Այ ինչպէս ապրեցրուց նորանց. խաչի վերայ նորանց համար մեռնելով, և նորանց

մեղքերըն վայտին վերայ երան մարմնովն վեր առնելով. և հենց երան արիւնովն նորանց երանց մեղքերիցն լուանալով։

Այլա ես մի թէ մին ժամանակ աստուծոյ էս զարմանալի սէրս միտքս առի։ Ես մեղաւոր եմ, և մեղքի մէջ ծնված. և նրա համար յաւիտենական պատժի տակն քցված։ Բայց Յիսուս Քրիստոս աշխարհք եկաւ որ մեղաւորներըն ապրեցնէ. հենց էնպիսիներըն՝ ինչպէս որ ես ինքս եմ։ Մի թէ մին ժամանակ բոլոր սրտով աղաչեցի նորան՝ որ ինձ ապրեցնէ։ Մի թէ հաւատացեմ, թէ ես ողորմելի մեղաւոր եմ։ Մի թէ էն միտքս եմ առնում և լաց եմ լինում նրա համար։ Ես մի թէ հաստատ խմանումեմ, թէ պէտք է որ մինչև յաւիտեան դատապարտված լինիմ, թէ որ Քրիստոս չըփրկէ ինձ։ Վա՜յ. քանի՞ շատ մարդիք կան՝ որ իսկի չեն մօտենում Քրիստոսի մօտ որ փրկէ նորանց։ Քանի շատ մարդիք իսպառ անհոգ և անփոյթ են էն փրկութեան համար որ Յիսուս Քրիստոս մեղաւորներին համար պատրաստել է։ Բայց մի թէ ես ինքս էս միտքս առի։ Մի

թէ իմ ամէն յոյսս հաստատուած է էս ճըշ-
մարիտ խօսքիս վերայ՝ թէ Յիսուս Քրիստոս
աշխարհք եկաւ որ մեղաւորներըն փրկէ։ Օհ
քանի՞ սիրտ տուող խօսք է էս։ Ուղղիդ որ ես
մեղաւոր եմ, և մեղաւորների գլխաւորն, բայց
ինձ համար էլ կարելի է որ էն մեղքիցն
փրկվիմ որ ես գործել եմ. և էն դժոխքիցն
ազատվիմ որ նորան ես արժանի եմ էլել.
միայն թէ սրտի զղջութենով իմ չարու-
թիւնըս ճանաչեմ, և հաւատքով մտիկ տամ
Յիսուս Քրիստոսին, և նորա վերայ իմ յոյ-
սըս դնեմ։ Օհ երանի թէ սուրբ հոգին
զօրացնէ ինձ որ մտիկ տամ Յիսուսին։ Վա՜յ
ինձ. ի՞նչ պիտի անէի ես աղքատ անսիրտան
և ողորմելի մեղաւորս, եթէ Յիսուս չըգար
որ փրկէ ինձ։ Քանի՞ ուրախութենով և
խնդութենով պէտք է ինձ էսպէսի ուրա-
խացնող աւետիքներըս ընդունել։ Իրաւի որ
էս խօսքս ամէն կողմանէ արժանի է ընդուն-
վելոյ. և հինգ ամէնին վերայ էլ պարտաւո-
րութիւն կայ որ ընդունեն նորան, որովհետև
ամէնքն մեղանչեցին, և փրկութեան կարօտ
էլան. և ամէնքն էլ որ իրանց կորուստըն

իմանումեն, կարող են գալ նորա մօտ՝ որ կարող է նորանց փրկել։ Ով Տէր՝ սուրբ հոգի զօրացրու ինձ էնպէս հաւատալ. որ իմ հոգիս էն հաւատքի ձեռովն փրկվի։

ԻՆՆԵՐՈՐԴ ՔԱՐՈԶ։

Նա որ ինձ մօտ է գալիս՝ ես դուրս չեմ հանիլ նորան (Յոհ. գ. 37։)

Օհ քանի սաստիկ սիրով ցաւակից և ողորմած է կորած մեղաւորներին սիրելի բարեկամն։ Ո՛րքան ինքն հոգացող է, որ ամէն արգելմունք և խափանմունք դէն քցէ էն քննող հոգոյ ճանապարհից, որ յոժար էլաւ աւետարանական պայմանին պէս փրկվիլ, էս է հնորհքով՝ հաւատքի ձեռովն. (Եփես. բ. 8։) Քանի մարդասիրութենով ցոյց է տալիս էսպէսներին քնութիւնը և ներսի միտքն և շարժմունքները՝ որ իսկի մինն յետ չը քաշվի վախով և իսկի չը յուսահատվի.

և աստուածային ողորմութեան ամէն քաղցրութենովն հենց ինքն կանչումէ նորանց որ իրան մօտ գան. Լսեցէք նորա յաստուկ խօսքերըն որ ասումէ. (Մատթ. ԺԱ. 28.) թէ ինձ մօտ եկէք ամէն վաստակեալներ և բեռնաւորներ՝ և ես հանգիստ կըտամ ձեզ: Ուրեմն հարցնումեմ. մի թէ դուք ճշմարտապէս ծանրայուծ և վաստակեալ էք մեղքի ծառայութենէն, և սատանայի և աշխարհքի գերութենէն: Մի թէ դուք ճշմարտապէս տրտմած էք մեղայ ծանր բեռնովն ձեր խղճմտանքներումն, և դատապարտութեան վախովն ձեր սրտերումն: Ահա մարդասէր փրկիչն կանչնած է և սպասումէ որ ձեզ իրան գիրկն ընդունի՝ և ահա էս են նորա քաղցր խօսքերն, որ նորա բերանէն են դուրս գալիս՝ թէ ինձ մօտ եկէք, և ես հանգիստ կըտամ ձեզ: Հաւատալի է նա՝ որ խոստացաւ էն. (Եբրայ. Ժ. 23.) և կարող չէ խաբել ձեզ: Նա չի փոխում էն բանըն՝ որ իրան պատշաճերովն դուրս եկաւ: (Մաղմ. ՃԼԵ. 35:) Ուրեմն նորա փորձըն առէք. և նորա մօտ եկէք: Նա կարող և կամեցող է փրկելոյ համար. էլ ինչո՞ւ համար էք երկմտում:

Բայց դու ասումես՝ թէ մեղաւոր եմ ես. ապա յայտնի լինի քեզ՝ որ Յիսուս Քրիստոս ամենակարող փրկիչ է։ Դու էլ ասելի հաստատումես՝ թէ շատ ժամանակ է որ ես համարձակ ապստամբված նորանից՝ խպատմեղքին և սատանային ծառայեցի էս աշխարհքումն. և թէ շատ տարի է որ ես կատաղած լըբութենով նորա առաջին մեղանչեցի։ Բայց թէ և էսպէս լինի՝ էլ դու դեռ ասուածոյ ողորմութեան սահմանիցն դուրս չես։ Էլ քո վիճակդ էնքան յուսահատ չէ՝ որ էն մեծ բժշկի խնամատութիւնն և զօրութիւնն չըկարենայ բժշկել քեզ։ Բայց լինի որ էլ ասելի ասես՝ թէ ես մեղաւոր եմ, չէ՞ թէ հասարակ ճանապարհներին պէս, բայց մեղաւորների գլխաւորն։ Ապա էս փրկութեան խօսքերս հենց քեզ վերայ է ուղղվել։ Պատճառն որ Յիսուսի արիւնն աստուածոյ արիւն է։ (Գործ. Լ. 28։) և նորա համար ամէն մեղքից սրբումէ. (Ա. Յօհ. Ա. 7։) նորա արդարութիւնն աստուածոյ արդարութիւն է. (Հռոմ. գ. 22։) և նորա համար բաւական է շատ ամբարիշտին էլ արդարացնելոյ։

Ուրեմն չէ երկմտես, և չէ յուսահատվիս. ինչու որ՝ քո փրկիչն՝ քո ողորմելի հոգոյ սիրոյն էնպէս է ասում. նա որ ինձ մօտ է գալիս, ես դուրս չեմ հանիլ նորան. և նորա առաջին խակի ջոկութիւն չըկայ. ինչու որ՝ նա չի ուզում. որ մինն կորչի, բայց որ ամէնքն ապաշխարութիւն դան: (Ք. Պէտ. գ. 9:) Բայց կասես դու, մի թէ պէտք չէ՞ ինձ, որ առաջ իմ սիրտըս շիտակայնեմ, և իմ կեանքըս դէպի լաւն փոխեմ, և ապա համարձակվիմ նորա մօտ գալ: Ապա ելթէ դու մոռիկ տաս և ուշանաս մինչև որ էս փոփոխութիւնըս քո անձիդ կարօղութենովն կատարես, իրաւի է որ վերջն քո մեղաց մէջն կըմեռնիս. ինչու որ՝ դու ինքդ խակի չես կարօղ քո սիրտըդ շիտակ անել. և քո կեանքըդ դէպի լաւն փոխել: Պէտք է որ Քրիստոս ինքն քո տեղակ անէ էս, նա ինքն ճշմարտութենով կանէ քեզ համար, երբ որ նորա խաչին մօտ կըգաս՝ քո մեղքերն խոստովանելով, և միայն նորա արիւնին վերայ քո ամէն յոյսըն դնելով, որ նը՞ ինքը քո մեղաց ճշմարիտ և կատարեալ քաւութիւն հաւատքով ընդու-

նես։ Այս պետք է քեզ որ նորա մօտ դաս հենց էնպէս ինչպէս որ ես. այսինքն ինչպէս ողորմելի և խեղճ մեղաւոր, որ նորա արիւնովն լուացուիս, և նորա արդարութենովն իբր նոր շորով զարդարուիս, նորա հոգովն սրբուիս և ապա պատրաստ լինիս նորա փառացն մասնակից լինելոյ։ Այլ ինչու ես երկմտում ընդունել էն որ նա էնպէս յօժար է տալ քեզ, և էն էլ ձրի և առանց արժանի, և առանց մեծ դին տալոյ. (Եսայ. ԾԵ. 1։) այսինքն մեղայ թողութիւնը, սրբութիւնը և երկնքի արքայութիւնը։ Պատճառն որ՝ նորա յատուկ գործն էն է որ մեղաւորներին ընդունի. (Գ-ՒԻ. ԺԵ. 2։) որ փրկէ նորանց։ Այս սրա համար յայտնի ասաց. թէ նա որ ինձ մօտ է գալիս՝ ով որ լինի, կամ ինչպէս որ լինի, ես իսկի դուրս չեմ հանիլ նորան։

ՏԱՄՆԵՐՈՐԴ ՔԱՐՈ՗։

Մենք որ հաւատքովն արդարացած ենք, աստուծոյ հետ խաղաղութիւն ունենանք մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովն։ (Հռոմ. Ե. 1։)

Տէրն ասումէ սմբարիշտներին խաղաղութիւն չը՛կայ։ (Ես. խբ. 21։) Պատճառն որ էն մեղաւորն որ դեռ մեղայ թողութիւն չի ստացել՝ չի կարող աստուծոյ հետ խաղաղութիւն ունենալ։

Քանի ժամանակ որ նորա խղճմտանքն դեռ թմրացած է, կարելի է որ նա անհոգ և անվախ լինի։ Բայց երբ որ նորա աչքերն կըբացվին, և նորա սիրտն կըսկսէ իմանալ իրան կորուստը, էն ժամանակն շուտով կըճանաչէ՝ թէ ինքն ողորմելի է, մինչև որ հենց աստուած ինքն խաղաղութիւն հայտնէ և շնորհէ նորա մեղքով դատապարտված հոգոյն։ Արդարանալն էն է՝ որ մեղայ թողութիւն ունք ստանում և աստուծոյ առաջին ընդունելի ենք լինում։ Բայց մեղայ թողութիւնը և աստուծոյ առաջին ընդունելի լինելը իսկի մին բանով չենք կարող ստանալ, բայց միակ Յիսուս Քրիստոսին հաւատալով՝ որ նա իրան պատուական արիւնովն մեր մեղքերը քաւեց։ Այս երբ որ շնորհք տըվի՝ վի ինձ որ հաւատամ, թէ Յիսուս Քրիստոս իմ մեղքերը վեր առաւ, էլ իսկի մին բան

չըկայ որ կարենայ իմ խղճմտանքըս խռովեսցնել։ Ինչու որ՝ էն ժամանակն խաղաղութիւն ունիմ աստուծոյ հետ։ Զարթնացած մարդոյ խռովութիւնն իրան մեղքով դատապարտված խղճմտանքիցն, և նորա մեղայ ծանր բեռնիցն է դուրս գալիս։

Ուրեմն երբ որ ողորմելի և վախով բռնըված մեղաւորն տեղեակ լինի՝ թէ Քրիստոս հենց էնպէսիներին համար մեռաւ, ինչպէս որ ինքն է. և թէ քրիստոս աստուած է, որ կարող է մեղաւորներին գլխաւորըն էլ փրկել. և թէ նորա աշխարհք գալոյ յատուկ պատճառն հենց էս էլաւ. և թէ՝ նա ինքն ասաց. նա որ ինձ մօտ է գալիս՝ ես դուրս չեմ հանիլ նորան. (Յոհ. զ. 37.) ասումեմ՝ երբ որ ողորմելի մեղաւորն էս ամէնս իմանայ և հաւատայ, ապա նա խաղաղութիւն ունի աստուծոյ հետ. և էն ժամանակն կարող է աստուծոյն իրան հայր կանչել, կարող է ամէն բանի համար աստուծոյ վերայ իրան յոյսըն դնել. կարող է շատ ուրախութենով մահի համար էլ մտածել, և աստուծոյ էն վառաց յուսովն ուրախանալ։

Ո՛վ մեղաւոր մարդ ասա՝ մի թէ դու էսպէս-սի երանելի վիճակումն ես հաստատված, պի-տու�՞ս որ քեզ փրկութիւն չկայ եթէ դու Քրիստոսի հետ մասնակցութիւն չունե-նաս. և թէ իսկի մին բանով աստուծոյ հետ խաղաղութիւն չկայ, բայց մէնակ Քրիստոսի ձեռովն. և թէ քո կեանքդ խսպառ ողորմելի պէտք է լինի, և քո մահդ յաւիտենական խղճութեան և տանջանաց սկիզբն պէտք է լինի, թէ որ քո մեղքերդ Քրիստոսովն չը-թողվին քեզ:

Եթէ մտիկ տամ Քրիստոսին ինչպէս մին մէնակ Փրկչին, և հենց իմ անձնիցս յուսա-հատ եղած վախչիմ նորա մօտ փրկվելոյ հա-մար. ապա աստուած ինձ վերայ էլ չի բար-կանալ. և իմ մեղքերն, որ շատ էին՝ թողվ-ված կըլինին. և իմ անձս ընդունելի կըլինի նորան. և թէ որ պատահի ինձ որ հենց էս գիշերումն մեռնեմ, հաստատ յուսով աստու-ծոյ մօտ կըգնամ, Ո՞հ քանի՞ երանելի է էս վիճակս՝ որ սրանում իսկի վախենալոյ պատ-ճառ չկայ ո՛չ կեանքիս մէջն և ո՛չ մահի մէջն: Ինչու որ՝ նորանում աստուած մեղ

բարեկամ ունինք, Յիսուսն փրկիչ, սուրբ հոգին մեզ միխիթարիչ, մահըն մեզ բարեկամ, երկինքըն մեզ տուն, և յաւիտենական աշխարհըն խաղաղութենով և ուրախութենով լցված և մեր առաջին դրած։ Ո՛վ մեղաւոր մարդ ասա՝ մի՞ թէ էս է քո հոգոյ վիճակին։

ՏԱՄՆՈՒ ՄԻՆ ՔԱՐՕՉ։

Զեզ հաւատացեալներիդ համար պատուական քար է։ (Ա. Պէտ. Բ. 7։)

Առաքեալն էս տեղ ողբմելի կորած մեղաւորներն սիրելի բարեկամ Յիսուսի Քրիստոսի համար է խօսում. նա որ մեզ վերայ ողբմած էլաւ՝ երբ որ մենք ինքս մեղքերին ծառայելով մեր անձներին վերայ անողորմ էլանք. որ էլ մեր տեղակ մեռաւ՝ երբ որ արդար օրէնքի իրաւունքին պէս արժանի էինք դժոխքի մէջ քցվելոյ։

Ապա հիմիկ՝ թէ որ հաւատաք թէ ձեր մեղքերն կըդատապարտէին ձեզ, թէ որ քանորանց իրան անձնոցն վէրը չէր առել. և թէ պէտք էր ձեզ մինչև յաւիտեան անիծ-

ված լինել՝ թէ որ քրիստոս ձեզ համար անէծք չէր էլել. և թէ որ խոնարհութեամբ հաստատ գիտենաք ձեր սրտերումն՝ որ նորա արիւնովն թողութիւն էք ստացել. և թէ որ կարող էք մտիկ տալ նորան ինչպէս թէ հենց ձեզ վերայ կասէր էն՝ որ աւետարանումն էն աղքատ մեղաւոր կնկանն ասաց։ (Ղուկ. Է. 48. 50.) թէ գնա՛ խաղաղութեամբ՝, քո մեղքերդ թողված են քեզ. ասումեմ. եթէ էս ամէնս լինի ձեր սրտումդ՝ ապա Քրիստոս պատուական է ձեզ համար, և սիրումէք նորան աւելի քան թէ ամէնքն։ Սիրումէք նորա համար մտածել նորանից լսել, նորանից խօսիլ. և ինչ որ մէն անդամ՝ նա պատուիրել է՝ ցանկանումէք էն անել. և ինչ որ մէն անդամ՝ արգելել՝ էն անելուցն խոպառ փախչումէք թէ և ամէն աշխարհքն էլ կարելի լինէր ստանալ։ Ապա դուք հիմիկ նոր ստեղծված էլաք. և կարող չէք էնպէս ապրիլ և վարվիլ՝ ինչպէս որ մէն ժամանակով ապրումէք. պատճառն որ նոր ծնվաք։ Հին անցկացաւ, և հիմիկ ամէնն նոր էլաւ։ (Բ. Կորնթ. Ե. 17։) Ինչ քան որ մէն ժամանակ ասումէք, ինչ-

պէս որ աղօթքը, օրհնաբանութիւնները, քարոզ լսելը և աստուծոյ խօսքը կարդալը, հենց էն հիմիկ սիրումէք, և ինչ որ մին ժամանակ սիրումէք, ինչպէս ունայն խօսակցութիւնները և ոչինչ փուչ ուրախութիւնները և զբաղմունքները, հենց էն հիմիկ ատումէնք՝ և յետ էք դառնում նորանից։ Հիմիկ կարող չէք քուն մտնել գիշերումն՝ եթէ առաջ չզգոհանաք ձեր ողորմած փրկչոյն էն ամէն պարգևներին համար՝ որ յերկուքն տուաւ ձեզ. և էլ եթէ առաջ չը յանձնէք ձեր անձնեերըդ նորա պահպանութեանն գիշերի պատահմունքների երեսին, և նորա ձեռքն տաք ձեր հոգիներըդ որ՝ եթէ հենց էս գիշերումն մեռնիք, նա իրան մօտ ընդունի ձեզ իրան արքայութեան մէջ։ Լաւ երբ որ առաւօտանց վեր կենաք՝ կարող չէք դուրս գալ աշխարհի մէջ ձեր օրինաւոր գործքերը կատարելոյ համար, եթէ առաջ աղօթքով չաղաչէք նորան՝ որ պահէ ձեզ աշխարհքի թալակներից, և սատանայի փորձանքներից։ Պատճառն որ՝ ձեր յանկութիւնն և խափանն մենակ էն է՝ որ հաճոյ լինիք ձեր

սիրելն փրկչին։ Եւ նրա համար ամէն բաներին աւելն նորան տրամացնելուն վախնումէք։ Նրա համար թէ ուտէք, և թէ խմէք, ցանկանումէք ամէնքն աստուծոյ փառաց համար անել։ (Ա. Կորն. Ժ. 31։)

ՏԱՆԵՐԿՐՈՐԴ ՔԱՐՈ՗Զ։

Հետևեցէք սրբութեանն, որ առանց նորան ոչ ով տեսնիլ չի տեսնիլ։ (Եբր. ԺԲ. 14։)

Աստուած սուրբ Աստուած է։ Քրիստոս սուրբ փրկիչ է. աստուծոյ հոգին սուրբ հոգի է, երկնքի արքայութիւնն սուրբ տեղ է. հրեշտակներն սուրբ հրեշտակներ են. և աստուծոյ ամէն փրկված ժողովուրդն սուրբ ժողովուրդ են։ Ուրեմն մի թէ ես էլ սուրբ եմ. թէ որ չեմ՝ ահա սուրբ դիրքն վայումէ լինձ. որ աստուծոյն չեմ տեսնիլ, և հենց էլ չեմ, կարող տեսնիլ։ Բայց էս սրբութիւնս ոչ թէ մէնակ կեանքի դրսի բարեգործութիւն և բարեձևութիւն է. ինչու որ՝ դրսի բարեձևութիւնն էն տեղ էլ կարող է լինել՝ որտեղ որ ճշմարիտ սրբու-

թիւն չըկայ. թէ և սրբութիւնն ինչն կա-
ըող չէ առանց բարեգործութեան լինիլ:
Թէ որ սուրբ ես ոչ մինակ մեղքիցն ես
յետ քաշվում, բայց էլ ճշմարտապէս նո-
ան ատում ես քո սըրտումդ: Ամէն մեղքե-
ըըն էլ ատում ես, ինչու որ էն ամէնըն որ
ատուածոյ կամքին հակառակ է, ատում ես և
զզվում ես. մինչև որ էլ քո էն զզվիլն ինչն
քո անձին վերայ է դառնում. նրա համար
որ դեռ միշտ մեղաւոր յանկութիւն է մնում
վեզանում: Պատճառն որ եթէ քո մեղքե-
ըըն վնասում ոչ մինակ քո կենցաղավարու-
թենումն կըզտնես, բայց էլ քո սրտումդ.
ինչու որ եթէ սուրբ մարդ ես, ապա քո
խղճմտանքդ ցաւումդ՝ ոչ մինակ գործքերի
և խօսքերի համար, բայց էլ քո մտածմունք-
ների և ծածուկ յանկութիւնների համար,
որ մեղաւոր են: Ուրեմն յանկանում ես որ
ոչ մինակ աշխարհքի աչքումն բարեձև եր-
ևաս, բայց որ ատուածոյն հաճոյ լինիս՝ որ
քո միտքդ և սիրտդ ատուածոյ կամքին և
հաճոյութեան հաւասար լինի: Իրաւի էսպէս
է: Մի՞տքդ քեր՝ որ գրված է (թէ) առանց

սրբութեան ոչ ով կարող չէ տէրին տես-
նել։ Որ փիչ խօսքով ասեմ. սրբութիւնն
աստուծոյ սէրն է, որ մեր սրտերի մէջ փըռ-
ված է էն սուրբ հոգոյ ձեռոքն՝ որ տըվ-
վաւ մեզ։

Հենց էս սէրս շարժումէ մեզ որ ամէն
բանի մէջ սուրբ հնազանդութիւն ցոյց տանք,
և աստուծոյ խօսքն էն կանոնն է լինում, որ
նորան պէս մեր կեանքի բոլոր ճանապարհ-
ները շինակենք և կառավարենք. և աս-
տուծոյ վառքն մեր առաջին դրած է լինչ-
պէս որ մեր ամէն կենցաղավարութեան և
գործքերի պատճառն և վերջն։ Ցայց հիմիկ
ոչ ով կարող չէ երկնքի թագաւորութիւնն
մտնել մինչև որ սրբված լինի։ Հաստատու-
մնս դու սրան. և քո սրտումդ աղօթք եա
անում, թէ Տէր ամենակալն սրբիր ինձ, հո-
գոյ, մտքի, և մարմնոյ կողմանէ։ Եթէ էս-
պէ է, ապա Տէրը սկսել է իրան բարի
գործքն քո սրտումդ, և էն էլ կըկատարէ
մինչև Յիսուսի Քրիստոսի օրն, որ դու սուրբ
և անարատ կանգնիս նորա առաջին սիրով։

ՏԱՄՆԵՒ ԵՐՐՈՐԴ ՔԱՐՈԶ։

Մտիկ տանք էն երանելի յուսոյն՝ և մեծ աստուծոյ և մեր փրկիչ Յիսուսի Քրիստոսի փառաւոր յայտնութեանն։ (Տիտոս. բ. 14։)

Քրիստոսին հաւատացած մարդոյ երանելի և առանձնական շնորհքն էս է, որ իրան տէրի մին էլ գալոյն և յայտնութեանն մտիկ տայ։ Յիսուս խոստացաւ՝ թէ ինքն մինէլ կըգայ, և թէ շուտով կըգայ։ (Յայտ. իբ. 20։) Նա յայտնեց թէ իրան գալն յանկարծակի պիտի լինի ինչպէս գիշերվան գողն գալն։ (ա. Թէս. ե. 2։) Այս ճշմարիտ հաւատացեալն է էնպէսի մարդ՝ որ յուսով ընդդուռմէ նորան, սպասումէ նորան, և պատրաստ է ուրախութենով ընդունել նորան։ Պատճառն որ՝ նա հաստատ գիտումէ՝ որ տէր Յիսուսն կըյայտնվի երկնքէն իրան զարութեան հրեշտակներովն կրակի բոցով վրէժ առնելոյ նորանցից, որ աստուծոյն չեն ճանաչում, և մեր տէր Յիսուսի Քրիստոսի աւետարանին չեն հնազանդվում, որ նորանք պատիժ կըքաշեն յաւիտենական կորուստըն Տէրի երեսէն՝ և

նորա փառաւոր զօրութենիցն։ Բայց նրա վերայ էն էլ գլխուումդ՝ թէ նորա մէն էլ գա-
լոյ պատճառն էն է, որ փառաւոր լինի իրան
սրբերու

էն բաներն՝ որ նորանց յուսով մոռիկ է տալիս, ամէնից պատուելի են, և միշտ կենալով և ճեալով յաւիտենական և հաստատ են էն մարդոյ համար, որ հաւատքով և յուսով սպասումէ նորանց: Մենք որ էս մարմնոյ և արևնի ծածքի տակն ենք. (Բ. Կորն. Ե. 4.) մեղքով, նեղութենով, և փորձութենով ծանրայած զգվումենք. բայց մեր Տէր Յիսուսի Քրիստոսի փառաւոր յայտնութեան ժամանակն ատուած ամէն արտասուքն կըսրբէ մեր աչքերիցն, և էլ մահ չի լինիլ, ոչ սուգ, ոչ աղաղակ, ոչ ցաւ, ոչ աշխատանք էլ չի լինիլ. ինչու որ՝ առաջինն անցկացաւ:

ՏԱՍՆ ԻՒ ՉՈՐՐՈՐԴ ՔԱՐՈՉ:

Թէ որ դուք որ չար էք՝ գիտումէք բարի պարգևներ տալ ձեր որդոցն, էլ որքան աւելի ձեր երկնաւոր հայրն բարի բաներ (սուրբ հոգին) կըտայ նորանց, որ խնդրումեն նորան: (Ղուկ. Ե. 4:)

Այս խօսքերովս մեր մարդասէր հայրն՝ որ երկնքումն է, թոյլ է տալիս մեզ որ մին շատ հարկաւոր բան հետց մեր խղճմտանքովն իմանանք և հաստատենք:

Նա մեր միտքս է բերում էն շարժմունք-
ները և քաղցր սէրը, որ իբր ծնողք որդոյ
վերայ ունենք, որ մեր յոյսը հաստատէ և
զարգացնէ. և սրա հաւար ասում. ձեզանից
ով է էն հայրն որ նորանից իրան որդին հաց
խնդրէ, մի թէ քաշ կըտայ նորան: Եթէ
մին սոված երախայ իրան հոր մօտ գայ՝ և
ասէ նորան. ով հայր սովամահ կորչում եմ,
հաց տուր ինձ որ ուտեմ. ապա հայրն՝ թէ
որ գայանից աւելի չար չըլինի, մի թէ քաշ
կըտայ իրան որդոյն՝ մի թէ կըծկածաղէ նո-
րանով: Կամ թէ որ ձուկըն խնդրէ՝ մի թէ
օձ կըտայ նորան. կամ թէ որ ձու խնդրէ՝
մի թէ կաշկանդ կըտայ նորան, որ սպանէ նո-
րան: Իրաւի որ չէ: Ուրեմն ով ինքան աւելի
էլ ձեր երկնաւոր հայրն, որ նորա սէրն
անչափ մեծ է իրան ողորմելի մեղաւոր որդոյ
վերայ. քան թէ ձերն, ձեր մարմնոյ ծնունդի
վերայ՝ բարի բաներ, այ սուրբ հոգին նորանց
կըտայ, որ խնդրում են նորան: Ես ողորմելի
և անխելք մեղաւոր եմ: Ես կարօտութիւն
ունիմ իմ անձս ճանաչելոյ՝ որ աստուծոյ
առաջին մեղաւոր եմ, և նորա արդար բար-

կութեան նեղքեն վէշ ընկած։ Ես կարօտ եմ որ Յիսուս Քրիստոսին ճանաչեմ որ նա իմ փրկիչ է. պատճառն որ՝ նորան ճանաչելն յաւիտենական կեանք է։ Բայց ես փրկութիւն տուօղ գիտութիւնըս մէնակ երկնաւոր և աստուածային ուսմունքիցն կարօղ եմ ստանալ։ Աստուած խոստացաւ տալ իրան սուրբ հոգին, որ՝ աղքատ և անխելք մեղաւորին, որ իրան անխելքութիւնըն իմանում է, առաջնորդէ էն ամէն ճշմարտութեան մէջ, որ հարկաւոր է նորան միսիթարելոյ և փրկելոյ համար։ Ո՞վ տէր թող քո սուրբ հոգիդ սովորցնէ ինձ։

Ես ողորմելի և անօգնական մեղաւոր եմ, և օրէցօր ճանաչումեմ՝ թէ կարօղութիւն չունիմ որ աստուծոյ որդոյն հաւատամ։ Բայց էն հաւատքն՝ որ Քրիստոսին ընդունում է, ամէնցին աւելի հարկաւոր է փրկելոյ համար։ Իմ խղճմտանքս՝ խռովված է իմ մեղքերին պատճառովն. ցանկանումեմ և կարօտ եմ որ ճանաչեմ նորան, և նորա յարութեան զօրութիւնըն։ Բայց էնքան անկարելի է ինձ իմ անձիս զօրութեան ջանքովն հաւատալ,

որքան որ անկարելի է ինձ մին աշխարհք ստեղծել։ Բայց աստուած խոստացել է տալ իրան սուրբ հոգին, որ հաւատքն ստեղծէ և գործէ ամէն մէկ մեղաւորի սրտումն, որ խոնարհութիւն ենով աղաչումէ իրան։ Մի՞ւ սէր օգնութիւն արա՛ ինձ, էնպէս հաւատալ, որ իմ խղճմտանքի խաղաղութիւնն, իմ հոգոյ փրկութիւնն, և քո անուան յաւիտենական փառքն հաստատվի։

Աստուած իրան սուրբ հոգին նորանց է տալիս՝ որ ինդրումեն նորան։ Մենք առանց նորա օգնականութեան ոչինչ չենք կարող անել. բայց մենակ մեղանչել, որ հենց նորանով մեր անձնեբրս ապականումենք և կորցնումենք։ Մի թէ խմանռմես դու թէ կարօտ ես էն օգնականութեանն։ Ա՛ռ մի թէ էն կարօտութիւնն և անչափ խեղճութիւնն տանռմեն քեզ շնորհայ ամենուին մօտ, որ աստուծոյ ամենից հարուստ շնորհքն ստանաս։ Մի թէ դու էլ էնպէս ինդրռմես՝ ինչպէս մին սուաց երախայ իրան հօրիցն հայ է ինդրում։ Իրաւի՞ է որ միտքդ առիր քո անխելքութիւնըդ՝ էնպէս որ բոլոր սրտով

սուրբ հոգոյ աստուածային ուսմունքը ինդրես. և ճանաչեցիր քո անօրնական վիճակդ՝ էնպէս որ աստուածանից օրնականութիւն ինդրես։

Ինդրեցէք՝ և կըտրվվի ձեզ՝ մանն եկէք և կըգտնէք, դուռն թակեցէք՝ և կըբացվի ձեզ։ Ինքդ քեզ՝ որ աստուած կարող չէ երան խօսքըն քանդել։ Եթէ ինդրեցիր՝ և չառիր, իմացիր որ ջերմեռանդութենով չըինդրեցիր։ Դու քո պակասութիւնըդ չես իմանում։ Ապա ինդրիր աստուածանից որ տայ քեզ քո պակասութիւնըդ ճանաչել, և ապա նա կըլցնէ նորան. աղաչիր նորան որ սովորցնէ քեզ աղօթք անել. եկ նորա մօտ ինչպէս աղքատ, անխելք, անմիտ, և թուլացած մանուկ, պատճառն որ՝ եթէ չըդառնար, և չըլինիք երախանների նման, կարող չէք երկնքի արքայութիւնն մտնել։ (Մատթ. ԺԸ. 3։) Ապա ուրեմն ով Տէր շնորհիր մեզ էս հոգիս, որ երախանների նման լինինք։

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՔԱՐՈՉ։

Արդկանց համար սահմանված է մին անգամ մեռնիլ. և նոքանից ետև դատաստանը։ (Ա՝Բ։ Թ. 27։)

Այս և դու մահկանացու ստեղծվածներ ենք։ Մենք տեսնենք որ մեր բարեկամներից և ազգականներից շատերն գերեզմանի մէջ դրվան. շատերն որ մեզ նման առողջ էին, և յոյս ունէին, որ էլ շատ ժամանակ մեզ հետ ապրին էս երևելի աշխարհքումն. մենք տեսնենք որ մին քանիսն շատ օրվան հիւանդությունով և տկարությունով մաշվեցան և կեանքից վէր կալվան, և մին քանիսն յանկարծակի էս կեանքից կորվեցան՝ առանց իմանալոց իրանց մեռնելոց սահմանը։ Մէնակ աստուած է գիտում, թէ մենք երբ պիտի նորանց ետևէն գնանք դէպի յաւիտենական աշխարհքն։ Մենք մեր վերջին օրը իսկի չենք գիտում, պատճառն որ՝ մեր ժամանակներն աստուծոյ ձեռքն են, և կարելի է որ հենց էս գիշերումն մեր մեռնելոց սահմանն գայ։ Բայց հաստատ էն ենք գի-

տում, թէ պէտք է որ մեռնելոյ սահմանն գայ. և էն էլ հաստատ գիտումենք, թէ նա շատ հեռու չէ մեզանից. միայն թէ որքան մօտիկ լինի՝ էն չենք գիտում: Բայց հիմիկ եթէ էս ամէնն Ճշմարիտ է. ապա ինչ անմտութիւն և յիմարութիւն է. Ճշմարիտ ապաշխարութեան հարկաւոր գործն հեռու քցել և օրէցօր նորան ուշացնել: Հաստատ չենք գիտում, եթէ առաւօտն ենք տեսնելու: Ուրեմն որովհետև ապաշխարութիւնն աստուծոյ պարգև է, ապա մենք եթէ ծուլանանք էն էս օրուանս ընդդիմել, և նորա զգուշացնող ձայնին չըլսենք, իրաւի որ նա կասէ մեզ ինպէս որ առակներումն ասել է. (ՍՍ. ԳԼ. 24. ԱՆ.) թէ որովհետև ես կանչումէի և չէիք լսում. իմ խօսքերըս երկարացընումէի և ականջ չէիք դնում. բայց իմ խորհուրդներըս անարգումէիք, և իմ խրատներիս ականջ չէիք դնում: Այդպա սրանից ետև ես կըծիծաղեմ ձեր կորստանվն և ուրախ կըլինեմ՝ երբ որ նեղութիւն և պաշարվելն կըգայ ձեզ վերայ: Այ երբ որ յանկարծակի խռովութիւն կըհասնէ ձեզ և կործան-

վեր մրրիկ (գոռՀոսկ ՀՈՏՈՑ) նմանութենով կըդայ. կամ երբ սատակվիլն կըհասնի ձեզ վերայ. կըլինի որ ինձ կանչէք. և ես չեմ լսել ձեզ. չարերն կըխնդրեն ինձ՝ և չեն գտնիլ: Ինչու որ իմաստութիւնըն ատեցին, և Տէրի վախըն չըխընդրեցին:

Սեռնեալսն եռև դատատանն է գալիս:

Սենք ամէնքս պէտք է Քրիստոսի դատաստանի աթոռի առաջին կանգնինք, որ ամէն բանի համար պատասխան տանք, որ մարմնոյ մէջ գործեցինք, թէ բարի լինի և թէ չար: Այս հալ է որ պէտք է էնտեղ կանգնի. ամէն մէկն, թէ փոքրն թէ մեծն, թէ մեծատունն թէ աղքատն, ինչու որ՝ խաչի ջոկութիւն կամ զանազանութիւն չըկայ: Այս դու և ես պէտք է երևինք էնտեղ: Բայց ինչու համար: Ենց նրա համար որ ամէնակարող դատաւորի առաջին մեր ամէն ծածուկ խորհուրդներին համար և մեր ամէն ծածուկ գործքերին համար պատասխան տանք: Նա մին յիշատակի դիրք է պահում, որ նորանում ամէն չար խորհուրդներն, խօսքերն, և գործքերն գրված են, որ նորանցից ամէն

մէկն առաջ կըբերվի մեզ յաւիտեան ամա-
ջայլնելոյ համար. եթէ տէր Յիսուսի Քրիս-
տոսի պատուական արիւնովն էն ամէնիսն
սրբված չըլլնիք։ Կարդումենք աճաշունչ
գրքումն. (Յոան. գ. 16։) Թէ մին քանիսն
էն օրումն կըկանչեն դէպի սարերն և դարե-
ըն կասեն թէ մեզ վերայ ընկէք, և ծածկեցէք
մեզ ամոռի վերայ նստողն երեսին,
և գառի բարկութենէն։ Բայց տէրն տայ
որ քեզ և ինձ չըպատահի էսպէսի կորուստ
և խեղճութիւն։ Այս ահաւոր վիճակիցս
պրծնելոյ համար, թող Տէրն խնդրենք դեռ
քանի որ նա մօտիկ է։ Թող ամբարիշտն
իրան ճանապարհէն թողէ, և անօրէն մարդն
իրան խորհուրդներըն, և դառնայ տէրին մօտ՝
և ողորմութիւն կըգտնէ. և մեր աստուծոյ
մօտ՝ որ շատ առատութենով նորա անօրէ-
նութիւններըն կըթողէ։ Ահա էս է շնոր-
հայ և փրկութեան օրն։ Բայց երբ որ դա-
տաստանի օրն կըգայ. ապա անկարելի կըլի-
նի որ ողորմութիւն խնդրես և գտնես։ Լաւ է
մեռնիս առանց Քրիստոսի հետ մատնակցու-
թիւն ստանալոյ. ապա լաւ էր քեզ որ խոկի

ծնված չը լինէիր։ Պատճառն որ՝ լաւ է խակի աշխարքի մէջ չը ծնվիլ՝ քան թէ միշտ և միշտ և յաւիտեան տանջանք քաշել և ողորմելի լինել դժոխքի մէջն։ Բայց հաստատ է որ հենց ամէն մեղաւորների բաժինն էս պիտի լինի՝ որ իրանց մեղաց համար թողութիւն չը խնդրեցին, և չը զղջացան իրանց սէր աստուծոյ մօտ դառնալոյ համար։ Պատճառն որ հենց աստուած ասաց էն՝ նա որ կարող չէ սուտ ասել։

ՏԱՍՆ ԵՒ Վ՝ԵՑԵՐՈՐԴ ՔԱՐՈՉ։

Մենք ինչպէս կըպարծնինք թէ որ անհոգ լինինք էնպէսի մեծ փրկութեան համար։ (Ա՝Բ։ Բ. 3։)

Իրաւի որ մեծ է էս փրկութիւնս և ամէն մոլեց էլ մեծ. ինչու որ էնպէսի փրկութիւն է, որ հենց աստուծոյ խմաստութենովն և սիրովն հաստատված է իմ՝ ողորմելի և կորած հոգոյս համար. և էնպէսի փրկութիւն՝ որ հենց այ մ՝ածին որդոյ մահովն պատրաստ-

վաճ է։ Որվ լթէ քանի մօտիկ էին ես դժոխ-
քի ատիին (գ.՝ գէհ՝,) որքան խոր ընկած էի,
քանի շատ և մեծ էին իմ մեղքերն, որ էս-
պէսի մեծ փրկուլթիւն հարկաւոր էր ինձ հա-
մար։ Ուրեմն քանի ահաւոր բան է նորա
համար անհոգ լինիլն։ Պատճառն որ՝ աստ-
ուած էլ ուրիշ որդի չունի որ աշխարհքի
համար տայ։ Եպա եթէ ծուլանաս, և անհոգ
լինիս էս փրկուլթեանս համար. եթէ
ջանք չանես որ Ճշմարտապէս ստանաս նորան,
եթէ միտք չանես քո մեծ կորուստի համար,
և փրկուլթեան համար որ քո առաջիդ կայ,
էլ ասա. ի՞նչպէս կարելի է քեզ որ ապրես.
անկարելի է։ Պատճառն որ՝ դու էն մին մէ-
նակ փրկիչն անարգումես, որ նորանով ամէ-
նից մեծ մեղք ես գործում. աստուծոյ ողոր-
մուլթիւնն, որ Քրիստոսումն է՝ դէն ես
քցում, և Քրիստոսի պատուական արիւնն
ոտի տակ ես կոխ տալիս։ Ուրեմն չմ՞ս վա-
խենում և դողդողում էդպէսի մտածմունք-
ների համար։ Հենց հաստատ հաւատա՝ լթէ
ամէն մեղաւոր մարդ, որ ծուլացած և անհոգ
է և աղլթքի համար ջերմեռանդ չէ, առ-

տուծոյ ողորմութեան և Քրիստոսի փրկութեան դէմ անհնարին խիստ մեղանչումէ. բայց իսկի ազատութիւն և միխիթարութիւն չըկայ նորանց համար, որ Քրիստոսին անարգումեն. պատճառն որ՝ սրանից ետև մեղքերի համար էլ աւելի պատարագ չըկայ. նորանց կորուստն հաստատ է և մշտիկ է և յաւիտենական և անտանելի կըլինի: Այս միտքդ քեր թէ ահա էս է ընդունելի ժամանակ. ահա էս է փրկութեան օրն: (Բ. Կորն. զ. 2:) Այթէ առանց Քրիստոսի մեռնիս, անկարելի է քեզ որ աստուծոյ երեսին համարձակութենով և միխիթարութենով տեսնես: Բայց հաստատ ճիշտ քեզ համար, որ լսես դատաւորի բերանից էն ահաւոր վճիռը որ ասայ. թէ հեռու գնացէք անիծվածներդ՝ յաւիտենական կրակն, որ սատանային և նորա հրեշտակներին համար պատրաստված է: (Մատթ. ին. 41:) Քաւ լեսի՝ Աստուած չէ անէ: Նրա համար մին էլ աղաչումեմ քեզ ով իմ մեղաւոր ընկերս՝ էս գիշերս վերջացնելուց և խիստ առաջ կանգնիր և միտք արա. և մանաւանդ ծունր դիր և երեսի

վերայ ընկնիր և դէպն աստուած աղօթք արա՛, որ քո խղճտանքիդ զարթնայնէ և Քրիստոսի գիտութիւնն քեզ շնորհէ։ Զնոյ իմ աղաչանքս և աղօթքս էլ վերանուամեն դէպն աստուած որ քո փրկութիւնդ հաստատվի։ Էլ իմ առաջիս մին ուրիշ պատճառ չըկայ էս գիրքըս քո ձեռքդ տալոյ համար, բայց մէնակ քո հոգոյ յաւիտենական փրկութիւնն։ Եվ իմ աստուած տուր՝ որ էս փոքր գիրքս շատ պտուղ բերէ կարդացողներին հոգոյն համար. թէ հիմիկ և թէ յաւիտեան. շնորհիր քո օրհնութիւնովդ, որ սորանում՝ գրած պատուակներն Ճշմարտութիւններն անուշ հոտ լինեն կենդանիս դէպն կանգ, և ոչ թէ մահիս դէպն մահ։ Աղաչումեմ քեզ ով Տէր շնորհիր էս Յիսուսի Քրիստոսի համար. Ամէն լինի։

Գ. Ա. Մясникян

2n

Ֆրանց Հրամանը 5
ուրբաթ հունիսի 5/VI-42 թ.